

# Իրավագիտություն

## Ռաֆիկ Պետրոսյան

*Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի վարիչ,  
իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր  
ՀՀ վաստակավոր իրավաբան*

## Գարեգին Պետրոսյան

*ՀՀ ԱԺ աշխատակազմի իրավաբանական վարչության պետ,  
ՀՀ պետական ծառայության առաջին դասի խորհրդական,  
իրավաբանական գիտությունների թեկնածու*

## ԻՐԱՎԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲԱՑԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿ

Աշխատանքը վերաբերում է իրավունքի բացերի վերացմանը (հաղթահարմանը): Ընդգծվում է, որ բացերի վերջնական վերացումը կատարում է միայն իրավաստեղծ մարմինը՝ նոր իրավական ակտ ընդունելու կամ դրանում լրացումներ կատարելու ձանապարհով, իսկ բացերի հաղթահարումն առաջին հերթին կատարում է դատարանը՝ օրենքի կամ իրավունքի համանմանության (անալոգիայի) կիրառմամբ: Ցույց է տրված, որ բացերի հաղթահարմանը մասնակցում են նաև գործադիր և գերատեսչական մարմինները՝ իրենց իրավասության սահմաններում:

Մանրակրկիտ անդրադարձ է կատարվել իրավաստեղծ գործունեության ապահովման համակարգաստեղծ և «շարքային» սկզբունքներին:

**Հիմնաբառեր.** իրավունքի բացեր, բացերի վերացում, բացերի հաղթահարում, իրավաստեղծ, համանմանություն, օրենքներ, այլ իրավական ակտեր, սկզբունքներ, հրապարակայնություն, եզրաբանություն:

Իրավունքում բացերի առկայությունն անցանկալի երևույթ է: Դրանք վկայում են տվյալ իրավական համակարգի անկատարության (թերությունների) մասին, սակայն բացերն օբյեկտիվորեն հնարավոր և անխուսա-

փելի են, ուստի դրանց հայտնաբերմանը պատմականորեն հաջորդել և ներկայում էլ հաջորդում են դրանք վերացնելու կամ ժամանակավորապես հաղթահարելու գործընթացներ:

Բացերի վերացումը կամ ժամանակավոր հաղթահարումն իրականացվում է օրինաստեղծ գործունեության նպատակներին հասնելու, իրավական համակարգն առավել ևս կատարյալ դարձնելու և այսպես կոչված՝ «ստվերային իրավաստեղծ գործունեությունը կանխելու», իրավունքի սուբյեկտների կողմից իրենց իրավունքներն ու օրինական շահերը անխոչընդոտ և լիարժեք իրականացնելու, իրենց իրավաբանական պարտականությունները պատշաճ կատարելու համար:

Բացերի հայտնաբերումը և վերացումը (հաղթահարումը) իրար օրգանապես հաջորդող անընդհատ գործընթացներ են, որովհետև հասարակական հարաբերությունների կարգավորումը և դրանց տարրերի ձևափոխումները տեղի են ունենում մշտապես: Սակայն, իրավունքի բացերի և դրանց կարգավորման թերությունների վերացման (հաղթահարման) միջև պրակտիկապես անցում է տևական ժամանակ, որը և իրավական նախադրյալ է հանդիսանում բացերի գոյության համար: Դա այսօր հատկապես նկատելի է անցումային շրջանի պետություններում, ինչպիսին Հայաստանն է, որտեղ հասարակական հարաբերությունները աչքի են ընկնում իրենց արագաշարժությամբ ու առաջ են ընկնում իրենց իրավակարգավորման գործընթացից:

Իրավաբանական գրականության մեջ հաստատվում է այն իրողությունը, որ «Իրավունքում հայտնաբերված բացերը կարող է լրացնել միայն օրենսդիրը, համապատասխան իրավաստեղծ իրավասու մարմինը», իսկ «Իրավակիրառ գործընթացում գործող իրավունքի բացերի հաղթահարման համար օգտագործվում են այնպիսի հատուկ իրավակիրառ եղանակներ, ինչպիսիք են «օրենքի անալոգիան» և «իրավունքի անալոգիան»<sup>1</sup>:

Ղեկավարվելով վերը նշված կանխադրյալներով՝ պետք է ասել, որ իրավունքի բացերն իրապես կոնկրետացվում և վերջնականորեն վերացվում են իրավասու իրավաստեղծ մարմինների կողմից՝ նոր օրենք, օրենքի նորմ կամ նորմերի խումբ (օրենսդրական մակարդակ), իրավական այլ նորմատիվ ակտեր կամ ակտերի իրավադրույթներ (ենթաօրենսդրական մակարդակ) ընդունելու միջոցով:

Իրավաստեղծ գործունեության միջոցով բացերի վերացման առավել օրինական (լեգիտիմ), պատմական նախընտրելի ճանապարհ է, որին, անշուշտ, մասնակցում են նաև ոչ իրավաստեղծ մարմինները, բայց նրանք բացերը վերացնելու իրավունքով օժտված չեն:

Պետք է նշել նաև, որ միայն իրավաստեղծագործության միջոցով բացերի հաղթահարումը պարտադիր է հատկապես իրավակարգավորման այն ոլորտներում, որտեղ իրավունքը (մասնավորապես օրենքը) չի թույլատրում անալոգիա կիրառել: Դրանք քրեական ու դրանց հարակից իրավա-

1 Տե՛ս В. С. Нерсесянц Общая теория права и государства. Изд-во НОРМА.М., 2000, էջ 489: Հեղինակների կարծիքով այս նախադասության հայերեն թարգմանության մեջ անտեղի ավելացվել է «կամ» բառը (Վ.Ս.Ներսեսյանց, Իրավունքի և պետության տեսություն, Եր, «Նաիրի», 2001, էջ 251):

հարաբերությունների, ինչպես նաև վարչական տույժերի բնագավառներն են, որոնց մասին կխոսվի հետագայում:

Անվիճելի է, որ բացերի հաղթահարման իրավաստեղծ գործունեությունը երկարատև ու դանդաղաշարժ գործընթացի արդյունք կարող է լինել: Մինչ այդ իրավակիրառ բոլոր մարմինները չեն կարող հրաժարվել խախտված կամ վիճարկվող իրավունքների պաշտպանությունից, և բնական է, որ քանի դեռ բացերն իրավունքում և օրենսդրության մեջ չեն վերացվել, իրավակիրառ մարմինների գործունեության մեջ նրանց հաղթահարումը պետք է իրականացնել օրենքով նախատեսված այլ եղանակների միջոցով: Այդպիսիք են օրենքի և իրավունքի անալոգիաները, իրավունքի լրացուցիչ կամ օժանդակ (սուբսիդիար) կիրառման հնարքները և այլն:

Իրավունքի բացերը պակասող օրենքով, իրավունքի նորմով, նորմերի խմբով կամ իրավական այլ ակտերով կամ դրանց առանձին իրավադրույթներով վերացնելու որոշում ընդունելուց առաջ իրավասու իրավաստեղծ պետական մարմինները պետք է մանրազնին ստուգեն և վերհանեն մի շարք պայմանների, հանգամանքների առկայության փաստը, այն է՝

ա) կարգավորման ենթակա, բայց չկարգավորված հասարակական հարաբերություններն առկա են, թե ոչ. եթե այո, ապա դրանք հասունացել են և իրավական կարգավորում են պահանջում,

բ) օրենքը, նորմը կամ այլ իրավական ակտը (իրավադրույթը) իրոք բացակայում է, թե՛ տվյալ իրավահարաբերությունը կամ վիճելի իրավադրույթը կարգավորված է ոչ լրիվ,

գ) բացերի առկայության ընդունումը և վերացումը չի՞ հակասում արդյոք պետության ընդհանուր կամ տվյալ հասարակական հարաբերություններում վարվող քաղաքականությանը,

դ) գոյություն ունեն արդյոք նոր ընդունվող օրենքի կամ այլ իրավական ակտի կիրառման ապահովող ընկերային-տնտեսական պայմաններ,

ե) օրենքում կամ այլ իրավական ակտում չկա՞ արդյոք բացը լրացնելու ուղղակի արգելք,

զ) կարգավորում պահանջող իրադրության (հանգամանքների) հիմնական իրավական հատկանիշները համընկնո՞ւմ են արդյոք նոր ընդունվելիք օրենքին, նորմին կամ իրավադրույթին:

Կարծում ենք, որ բացերի վերացման վերը նշված պայմանները պարզելուց հետո իրավաստեղծ մարմինն անպայման պետք է հաշվի առնի նաև տվյալ հարցի (իրավաստեղծման առարկայի) վերաբերյալ հասարակական կարծիքը, և, որ ամենագլխավորն է՝ իրավաբան-մասնագետների, առաջին հերթին՝ իրավաբան-գիտնականների հայեցակետերը, մշակումները և երաշխավորությունները:

Իրավաստեղծագործության միջոցով բացերի վերացման համար առաջին հերթին անհրաժեշտ է կատարելագործել՝ 1) իրավաստեղծման բուն գործունեությունը, 2) հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումը, 3) նոր իրավական ակտերի ընդունմամբ վերացնել ՀՀ սահմա-

նադրական դատարանի կողմից օրենքների և այլ իրավական ակտերի հակասահամանադրականության, իրավական բացերի առկայության կամ օրենքի և այլ իրավական ակտի դրույթը Սահամանադրությանը համապատասխանող, բայց այլ մեկնաբանությամբ կիրառվելու դեպքում թույլ տրված սխալները<sup>1</sup>:

Իրավաստեղծ բուն գործունեության կատարելագործումն իր հերթին նշանակում է, որ օրենքները և (կամ) այլ նորմատիվ ակտերը, նախևառաջ, պետք է կայուն լինեն, բայց հասարակական հարաբերությունների (կյանքի պայմանների) փոփոխման հետ պետք է համապատասխանեցվեն դրանց:

Իրավաստեղծ գործունեության կատարելագործման հաջորդ և նույնքան կարևոր պահանջը օրենսդրական ողջ գործունեությունը գիտականորեն հիմնավորված մեթոդաբանությամբ իրավաստեղծման համակարգաստեղծ սկզբունքների, ընդհանուր տեսական հայեցակետերի, գիտական հասկացությունների և իրավական մշակույթի պահպանմամբ, իրավաստեղծման համաշխարհային դրական փորձի հաշվառմամբ իրականացնելն է:

Ընդհանրացնելով իրավաստեղծման գործընթացի վերաբերյալ հայրենական և արտասահմանյան իրավաբանական գրականության մեջ մատնանշվող պահանջները, պետք է նշել, որ այդ գործընթացն իրենում ներառում է՝ ա) իրավաստեղծագործության գիտական ճիշտ կազմակերպումը, բ) տվյալ գործունեությունը ժամանակի ընթացքում փորձառություն բռնած և ձևակերպված հաստատուն հիմունքների հիման վրա կառուցելը, գ) իրավաբանական որոշումներ ընդունելիս այն բոլոր օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները պարզաբանելը և գնահատելը, որոնք այս կամ այն կերպ վերաբերում են ընդունվող նորմատիվ ակտի բովանդակությանը և դրա հետագա գործողությանը, դ) նորմատիվ ակտի տեքստը մշակելիս իրավաբանական (օրենսդրական) տեխնիկայի կանոնների ճիշտ կիրառումը, ե) օրենսդրական գործունեությունը անհրաժեշտ տեղեկատվական նյութերով (տարբեր երկրների փորձի վերլուծությամբ, տեղեկատվական տեղեկություններով և այլն) ապահովելը, զ) նորմատիվ ակտի նախագծման, քննարկման, ընդունման և հրապարակման ընթացակարգի խստագույն պահպանումը<sup>2</sup>:

Հասարակական հարաբերությունների կատարելագործման և իրավունքի բացերի վերացման հարցում հսկայական դեր է խաղում նաև ժամանակակից հասարակարգում իրավական մշակույթի մաս կազմող «Էլեկտրոնային կառավարման» գործածումը, որը (տեղեկատվության ազատ շրջանառումը) թույլ է տալիս նվազեցնել իրավունքի բացերի քանակը:

Իրավական կարգավորման համակարգաստեղծ սկզբունքներին յուրահատուկ են որոշակի բնորոշ գծեր, որոնք իրավաբանական գրականության մեջ հաճախ անվանվում են նաև «իրավակարգավորման բնութագրիչներ»: Դրանք են՝ նորմատիվությունը<sup>3</sup>, հրամայականության (անպայմանության)

1 Իրավունքի բացերի վերացմանն ուղղված ՀՀ սահմանադրական դատարանի պրակտիկայի վերլուծությունը կկատարենք առանձին հոդվածով:

2 Տե՛ս Արությունյան Մնացական Գայկովիչ Փրոբելի в праве и проблемы их устранения (теоритико-практический анализ). Автореферат. дис. канд. юрид. наук, Ереван, 2012, էջ 18–19:

3 Տե՛ս Смирнов О.В. Основные принципы советского трудового права. М.: Юрид.лит., 1977, էջ 24:

բարձր աստիճանը<sup>1</sup> գործողության համընդհանրությունը<sup>2</sup>, նպատակաուղղվածությունը<sup>3</sup>, ձևական որոշակիությունը<sup>4</sup>, համակարգայնությունը<sup>5</sup>, գործողության կայունությունը<sup>6</sup>, իրավունքի և իրավական կարգավորման միասնականության և ներքին անհակասականության ապահովումը<sup>7</sup>:

Իրավական կարգավորման վերը նշված բոլոր գծերը վկայում են, որ դրանք հասարակության կառավարման կարևորագույն միջոց են և ապահովում են հասարակական հարաբերությունների բազմակողմանի իրավական կարգավորումը, որ դրանց արդյունքներն օգտագործվում են նորմատիվ իրավական ակտերում, որոնց բարձր իրավական որակը տվյալ հասարակության քաղաքակրթված և ժողովրդավարական լինելու չափանիշ է<sup>8</sup>:

Իրավաստեղծումը իրավական կարգավորման մի առանձին փուլ է, որի ընթացքում հավասարապես պահպանվում են առաջինիս բոլոր գծերը (բնութագրիչները): Մյուս կողմից նշված բնութագրիչների ապահովումը օրենսդիրն իրականացնում է միայն իրավաստեղծ գործունեությանը յուրահատուկ սկզբունքների պահպանման հիման վրա:

Նկատի ունենալով, որ իրավական կարգավորման իրավաստեղծ փուլի մասին արդեն իսկ խոսվել է մեր նախորդ հոդվածներում, ինչպես նաև այն, որ իրավունքի և իրավական կարգավորման վերը թվարկված բնորոշիչներն արդեն բոլոր իրավաբանների համար դասագրքային հասկացություններ և իրավագիտության մեջ լայնորեն լուսաբանված (նույնիսկ ծեծված՝ տրիվիալ) բնույթ ունեն, որ իրավական կարգավորմանը բնորոշ այդ բնորոշիչներն ապահովում են իրավաստեղծ գործունեության համակարգաստեղծ սկզբունքների պահպանման միջոցով, հեղինակները չեն անդրադառնում դրանց, առավել նպատակահարմար համարելով մեկնաբանել իրավաստեղծման տրամաբանական հիմունքները ձևավորող հիմնարար, ողջամիտ և արդյունավետ սկզբունքները, որովհետև վերջիններս են կարգավորում օրինաստեղծ գործընթացի առանձնահատկությունները և ընդհանուր ուղղությունները: Դրանք են կոչված օգնելու օրենսդիրին՝ խուսափելու իրավաբանական սխալներից և նվազեցնելու անարդյունավետ նորմերի ստեղծման հավանականությունը, երաշխիք են նորմատիվ իրավական ակտերի ամբողջականության, պարզության և մատչելիության,

1 Տե՛ս Явич Л.С. Конституция СССР и некоторые вопросы общей теории советского права//Конституция СССР и дальнейшее развитие государственного права и теории и права. М.: Из-дво ИГПАН СССР, 1979, էջ 68:

2 Տե՛ս Алексеев С. С. Проблемы теории права.: Основные вопросы общей теории социалистического права. Курс лекций в 2 т. Т.1. Свердловск.: Из-дво Свердл. Юрид. ин-та, 1972, էջ 105:

3 Տե՛ս Васильев А.М. Правовые категории. Методологические аспекты разработки системы категорий теории и права. М.: Юридлит., 1976, էջ 225:

4 Տե՛ս Недбайло П.Е.Применение Советских правовых норм. Госюриздат, 1960, էջ 466:

5 Տե՛ս Явич Л.С. Право развитого социалистического общества. Сущность и принципы. М.: Юрид. лид., 1978, էջ158-159:

6 Տե՛ս Свердлов Г.А. Принципы советского гражданского права. Красноярск: Изд-во Краснояяр. ун-та, 1985, էջ 58:

7 Տե՛ս Черданцев А.Ф. Системообразующие связи права// Сов.гос.и пр., 1974, N 8, էջ 11:

8 Տե՛ս Краснов Ю.К. Законодательный процесс в Государственной Думе.: Пути совершенствования. М.: Издание Государственной Думы, 2004, էջ 32, Чуквичев Д.В., Аширов Б.С. Законодательная техника. Учебное пособие.-Ашгабад: Центр ОБСЕ в Ашгабаде, 2011, էջ 50:

հստակության և կատարողականության ապահովման համար<sup>1</sup>:

Իրավաբանական գրականության մեջ իրավական կարգավորման կարևորագույն փուլ հանդիսացող իրավաստեղծագործության բնագավառի համար մատնանշվում են՝ իրավաստեղծ աշխատանքների ծրագրավորման և կանխատեսման, մարդու և քաղաքացու արժանապատվությունը ճանաչելու, իրավունքներն ու ազատությունները բարձրագույն արժեք ճանաչելու, մարդասիրության, արդարության, ժողովրդավարության, օրինականության, հրապարակայնության, գիտական հիմնավորվածության (գիտականության), ստեղծագործական բնույթ ունենալու, արհեստավարժության (պրոֆեսիոնալիզմի), իրավական փորձի օգտագործման, պրակտիկայի հետ կապի ապահովման, իրավական ակտերի նախապատրաստման պատշաճության և մանրակրկիտության, իրավունքի համակարգվածության, իրավական ակտերի տեխնիկական կատարելության, արդյունավետության (ողջամտության, նպատակահարմարության, ժամանակին ընդունված լինելու) և իրագործելիության, օրենքի և այլ իրավական ակտերի ձևի և բովանդակության համապատասխանության, առաջնայնության, խնայողության, իրավական միասնականության, իրավական որոշակիության, իրավաստեղծման գործընթացի իրավական բնույթի և հատուցման (ռետրիբուտիվ ապահովվածության) սկզբունքները, որոնք, սակայն, սպառիչ լինել չեն կարող, որովհետև կյանքը, այդ թվում՝ իրավագիտությունը և իրավական պրակտիկան, հասարակական հարաբերություններն անընդհատ զարգացման միտում ունեն և իրավաստեղծ գործընթացին առաջադրում են նորանոր պահանջներ:

Ամենից առաջ պետք է ընդգծել, որ իրավաստեղծագործման գործընթացն ամբողջությամբ մտավոր գործունեություն է՝ ուղղված երկրում նոր օրենքների և այլ իրավական ակտերի ստեղծմանը, կամ եղածների փոփոխմանն ու լրացմանը: Այդ գործընթացը վկայում է մշակութային, քաղաքականության, ժողովրդավարության, հատկապես՝ տնտեսական հարաբերությունների կարգավորման և այլ բնագավառներում պետության գործունեության արդյունավետության աստիճանի մասին, և դրա համակարգաստեղծ սկզբունքներից յուրաքանչյուրն արտացոլում է հասարակական կյանքի այս կամ այն կողմը, իրավաստեղծման այս կամ այն բնորոշիչ հատկանիշը:

**Իրավաստեղծ աշխատանքների ծրագրավորման (պլանավորման) և կանխատեսման սկզբունքը** առաջին հերթին նշանակում է, որ կառավարությունը, որն օրենսդրական նախաձեռնության հիմնական սուբյեկտն է Հայաստանում, իր կողմից նախապատրաստվող և ԱԺ ներկայացվող օրինագծերը և իր կողմից մշակվող ու ընդունվող այլ իրավական ակտերը պետք է ծրագրավորի երկրի զարգացման հեռանկարային ծրագրերի և կանխատեսումների, հատկապես՝ սահմանադրական փոփոխությունների և միջազգային փորձի ուսումնասիրման հիման վրա:

Հասկանալի է, որ իրավաստեղծ գործադիր մարմինների իրավաստեղծման առարկա հանդիսացող իրավական ակտերի ծրագրավորումը ևս

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012–2016 թվականների ռազմավարական ծրագիրը:

պետք է բխի կառավարության հեռանկարային ծրագրերից: Օրինաստեղծ ԱԺ պատգամավորների և պատգամավորական խմբակցությունների կողմից մշակվող նախագծերը, իհարկե, չեն կարող սահմանափակվել միմիայն կառավարության ծրագրերով, սակայն օրինաստեղծման հարցում պետք է սերտ համագործակցություն լինի կառավարության և նրանց միջև:

Իրավաստեղծ աշխատանքի ծրագրավորումը թույլ է տալիս հաղթահարել օրինագծերի և իրավական այլ ակտերի մշակման ու ընդունման շտապողականությունը և միմյանց փոխկապակցված իրավական ակտերի անհամաձայնությունները, այսինքն՝ ծրագրավորումը կարևորագույն նշանակություն ունի օրենքների և այլ իրավական ակտերի (օրենքի նորմի, նորմերի խմբի, իրավական դրույթների) մշակման ուղղությամբ ուժերը համախմբելու, իրավական կանխատեսելիության և կայունության ապահովման համար<sup>1</sup>:

Իրավաստեղծման աշխատանքների ծրագրավորումը պետք է նախատեսի հասարակական հարաբերությունների՝ տվյալ ոլորտի կոնկրետ իրավական խնդիրների լուծման եղանակներ, այն է՝ ամբողջական նախագծերի մշակում, գործող օրենքներում և այլ իրավական ակտերում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու առաջարկությունների նախապատրաստում, իրավաստեղծման հայեցակարգերի մշակում և այլն:

Իրավաստեղծ գործունեության ծրագրավորումն ամենևին էլ չի բացառում այսպես կոչված՝ «ոչ պլանային», արտահերթ նախագծերի քննարկման և ընդունման հնարավորությունը, որովհետև հասարակական կյանքը շատ ավելի բարդ ու բազմազան է, քան դա կարելի է նախատեսել ու պլանավորել<sup>2</sup>:

**Մարդու և քաղաքացու արժանապատվությունը, անօտարելի իրավունքներն ու ազատությունները բարձրագույն արժեք ճանաչելու սկզբունքի** և համապատասխան իրավաստեղծ ամբողջ գործընթացը պետք է ուղղված լինի այնպիսի պայմանների և երաշխիքների ստեղծմանը, երբ մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները ներառված են օրենքների, իրավական այլ ակտերի իմաստի և բովանդակության մեջ ու հաշվի են առնվում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մեջ: Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու արժանապատվությունը, անօտարելի իրավունքներն ու ազատությունները, որոնք ճանաչված են միջազգային հանրության կողմից, չեն կարող վերացվել օրենսդրությամբ, իսկ անհրաժեշտության դեպքում հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը (ՀՀ Սահմանադրության 3, 23 և 78-րդ հոդվածներ):

**Արդարության սկզբունքը**, որը դարերի խորքից է գալիս, պետք է ներ-

1 Տե՛ս Հրայր Թովմասյան, Իրավաստեղծ գործունեություն: Օրենսդրական տեխնիկա (Ոստում ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների փորձագետների համար: Ընտրված նյութերի ժողովածու, Եր., Մակմիլան-Արմենիա, 2004, էջ 10):

2 Տե՛ս Սաֆարյան Գ.Հ., Իրավաստեղծ գործունեության և օրենսդրության զարգացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում: Եր., ԱՌՏ, 2004, էջ 120:

ծծված լինի յուրաքանչյուր պետության ողջ օրենսդրության մեջ, այլ կերպ՝ պետական մարմիններից ելնող ցանկացած նորմատիվ իրավական ակտ պետք է լինի արդարության մարմնացում:

Գոյություն ունեն արդարությունն իրավական նորմում ամրագրելու մի քանի եղանակներ: Դրանցից ամենադյուրինը դրա անմիջական ամրագրումն է իրավական ձևակերպման մեջ. օրինակ՝ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ: Եթե օրենքում չի նշվում «արդարություն» բառը, ապա դա ամենին չի նշանակում, որ տվյալ իրավական ակտին խորթ է արդարության կանխադրույթը: Ըստ Ն.Ա. Չեչինայի՝ բոլոր իրավական նորմերը կարող են գնահատվել բարոյականության, հետևաբար և՛ արդարության տեսանկյունից: Երբ արդարությունն ուղղակիորեն չի նշվում նորմատիվ իրավական ակտում, այն կարող է ամրագրվել դրանում տարբեր ձևերով՝ հավասարություն հասարակական հարաբերությունների մասնակիցների միջև, իրավունքների և պարտականությունների հստակ փոխհարաբերակցության ամրագրում, պատժի անհատականացում և այլն:

Ընդհանուր կամքի բացահայտման ժամանակ շատ բան կախված է օրենսդրի անձից: Ինչպես դիպուկ կերպով նշում է Պ.Մ.Ռաբինովիչը, իրավունքը ոչ միայն հասարակական կեցության արտացոլումն է, այլև՝ օրինաստեղծման ինքնարտահայտումը, որն իր մեջ կրում է այդ սուբյեկտի բաղկացուցիչ կազմող անհատների հոգեբանական առանձնահատկությունները, նրանց անձնական փորձը, կյանքի պայմանները<sup>2</sup>: Ուստի բավականին մեծ գիտագործնական հետաքրքրություններ է ներկայացնում այն հարցը, թե ինչպես է անհատի առանձին հատկություններն ազդում իրավաստեղծ մարմնի աշխատանքի վրա: Պարզ է, որ իրավաստեղծման նման պատասխանատու գործունեությունը չպետք է «բազմացնի» առանձին անձանց բացասական որակները: Իրավաստեղծման գործունեության մեջ իրավունքի սկզբունքների պահպանումն իրավական որոշումներին հաղորդում է իրապես արդարացի բնույթ, իսկ խախտումը, ընդհակառակը, կարող է հանգեցնել իրավունքի «ամորձատման»: Հենց դրա համար է առանձնապես կարևոր բարձրացնել հարգանքն օրենքի ու արդարության՝ որպես մարդու իրավունքների երաշխավորման հիմքի նկատմամբ: Իրավունքը պետք է հենվի արդարության վրա: Իրավական պետությունն անհամատեղելի է անարդարության հետ, քանի որ վերջինս խեղաթյուրում, քանդում է իրավունքը, այլ ոչ թե պաշտպանում այն խախտումներից:

Արդարության սկզբունքը ենթադրում է խիստ պատժի կիրառում, որպես կանոն, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների և հանցագործությունների ռեցիդիվի դեպքում: Իսկ այն անձանց նկատմամբ, ովքեր առաջին անգամ կատարում են ոչ մեծ ծանրության հանցագործություն, սովորաբար կիրառվում են ազատությունից չզրկելու հետ կապված պատ-

1 Стів Чечина Н.А. Воспитательная функция советского гражданского процессуального права.-Л., 1972, էջ 185:

2 Стів Рабинович П.М. Право как явление общественного сознания// Правоведение,-1972, N 2 էջ 115:



ժատեսակներ (տուգանք, հանրային աշխատանքներ և այլն):

Շարադրվածը թույլ է տալիս անել երկու եզրահանգում: Առաջին՝ արդարության գաղափարն իրավունքի տարբեր ձյուղերում դրսևորվում է կամ նորմ-սկզբունքների ձևով, կամ ենթադրվում է՝ մանրամասնվելով նորմատիվ իրավական ակտերում ամրագրված դրույթներում: Երկու դեպքերում էլ արդարության սկզբունքը ներթափանցում է հասարակական հարաբերությունների բոլոր ոլորտները: Երկրորդ՝ արդարության սկզբունքը կարող է արտահայտվել ամենատարբեր ձևերով: Այստեղ կարևոր է, որ իրավական նորմերն ու դրանց կիրառումն ուղղված լինեն մարդու բնական և համընդհանուր իրավունքներին ու ազատություններին, բարոյականության սկզբունքներին:

**Մարդասիրության սկզբունքի** համաձայն յուրաքանչյուր օրենք կամ այլ իրավական ակտ առաջին հերթին պետք է նպատակաուղղված լինի մարդու կյանքի ու առողջության պաշտպանությանը, արժանապատվության պահպանմանը և պաշտպանությանը, նրա իրավունքների ու ազատությունների, նրա հոգևոր և նյութական պահանջմունքների առավելագույն բավարարմանը: Օրենքը և այլ իրավական ակտը պետք է ծառայեն ազատությանը, մարդկանց փաստացի հավասարությանը և իրավունքին, վերջինիս իրացմանը: Պետության օրենքները և մյուս իրավական ակտերը անհրաժեշտ են իրավունքի համար, բայց եթե դրանք ոչ թե պաշտպանում, այլ ոտնահարում են արդարությունը և հավասարությունը, դրանք չեն կարող համարվել իրավական կամ արդարացի: Ինչպես ընդունված է ասել, մարդը և նրա շահերը պետք է լինեն իրավաստեղծ գործընթացի կենտրոնում:

Իրավաստեղծ գործընթացի մարդասիրական բնույթն իրենում ներառում է նաև մեկ այլ կարևոր հանգամանք. օրենքները և այլ իրավական ակտերը կոչված են պաշտպանելու հասարակական արժեք դարձած մարդու բնական իրավունքները, իրավական կարգավորման միջոցներով (իրավաբանական հնարքներով) ստեղծել դրանց կենսագործման կառուցակարգեր և պայմաններ: Իրավունքի աղբյուրների մարդասիրական բնույթը սերտորեն առնչվում և կապված է բարոյականության հիմունքներին դրա համապատասխանության հետ: Իսկ դա նշանակում է, որ դրանք չեն կարող պարունակել այնպիսի դրույթներ, որոնք կարող են մարդուն դրդել անբարոյական գործողությունների:

Այսպիսով, իրավաստեղծման գործընթացում մարդասիրության սկզբունքը ի սկզբանե ենթադրում է օրենքների և այլ նորմատիվ ակտերի ստեղծում բացառապես հանուն մարդու իրավունքների և ի շահ հասարակության յուրաքանչյուր անհատի ու ամբողջ հասարակության պահանջմունքների արժանապատիվ բավարարման: Մեր խորին համոզմամբ սա էլ իր հերթին նշանակում է, որ մարդասիրության սկզբունքի կարևորագույն բաղկացուցիչներից մեկը հենց անհատի շահերի և հանրային պահանջմունքների միջև հավասարակշռության ստեղծումն ու պահպանումն է:

**Ժողովրդավարության սկզբունքն** առաջին հերթին արտահայտվում է իրավաստեղծման գործընթացին հասարակայնության լայն շերտերի ներ-

գրավմանը, այն է՝ իրավական նորմերի ընդունմանը և իրացմանը քաղաքացիների մասնակցությունն ապահովելու մեջ: Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 109 հոդվածի 6-րդ մասում ամրագրված է, որ ընտրական իրավունք ունեցող առնվազն հիստուն հազար քաղաքացի ունի Ազգային ժողովին քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք, իսկ 204 հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե Ազգային ժողովը մերժում է Սահմանադրության 109-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով ներկայացված օրենքի նախագծի ընդունումը, ապա մերժումից հետո վաթսուն օրվա ընթացքում օրենքի նախագծի ընդունման նախաձեռնությանը ընտրական իրավունք ունեցող ևս երեք հարյուր հազար քաղաքացու միանալու դեպքում նախագիծը դրվում է հանրաքվեի, եթե սահմանադրական դատարանը նախագիծը ճանաչում է Սահմանադրությանը համապատասխանող: Դրան գումարած՝ հանրաքվեի միջոցով ընդունված օրենքները կարող են փոփոխվել միայն հանրաքվեով:

Հանրաքվեն շատ օգտակար, բայց բավականին բարդ ու ծախսատար գործընթաց է: Այդ է պատճառը, որ գույություն ունեն նաև ժողովրդին իրավաստեղծ գործունեությանը ներգրավելու բազմաթիվ այլ ձևեր, ինչպիսիք են օրինագծերի նախնական հրապարակումը և համաժողովրդական քննարկման դնելը, հրապարակված օրինագծերը աշխատանքային կոլեկտիվներում, համաժողովներում, կլոբ սեղանների և սեմինարների ընթացքում, մամուլում, հեռուստատեսությամբ և ռադիոյով դրանց քննարկումներն ու համապատասխան առաջարկներ ներկայացնելը, դրանց ազատ քննադատությունը, օրինագծերի այլընտրանքային տարբերակներ առաջարկելը և այլն: Այս առումով մենք ևս համաձայն ենք Մ.Պիգոլկինի և Տ.Ռախմանինայի այն տեսակետին, որ օրինաստեղծման (հետևաբար և իրավաստեղծման հեղինակներ) ժողովրդավարությունը երաշխավորող գլխավոր պայմանը հրապարակայնության ուժեղացումն է, ինչպես նաև ստեղծագործական քննարկումների կարողունակության ընդլայնումը<sup>1</sup>: Շատ քաղաքացիներ, այդ թվում՝ իրավաբան գիտնականներ, պրակտիկ աշխատողներ, արտահայտում են իրենց անձնական դատողությունները օրինագծերի մասին և հասցեագրում դրանք օրենսդրին: Ժողովրդավարության սկզբունքը ենթադրում է օրինաստեղծման գործընթացին նաև կուսակցությունների (ինչպես խորհրդարանական, այնպես էլ արտախորհրդարանական) և հասարակական կազմակերպությունների մասնակցությունը: Օրինագծերը հրապարակվում են խորհրդարանների պաշտոնական համացանցային կայքերում: Քննարկումների ընթացքում ստացված դիտողություններն ու առաջարկությունները դիտարկվում են օրինաստեղծ մարմնի կողմից և (կամ) օրինագծում կատարվում են համապատասխան լրացումներ:

Իրավաստեղծ գործընթացին իրավական և ոչ իրավական հասարակայնության լայն մասնակցությունը թույլ է տալիս արդյունավետորեն վերհա-

1 Stú Pigolkin A.C., Рахманина Т.Н. Вопросы методики подготовки законопроектов.-М.: Изд-во Ин-та Законодательства и сравн. правоведения. Выпуск 59, 1993, էջ 91:

նել ժողովրդի իրական կամքը այս կամ այն ոլորտի կարգավորման հարցում: Անդրադառնալով «ժողովրդի կամք» հասկացությանը՝ նշենք, որ այն անընդհատ փոփոխվում է՝ կապված ժողովրդավարական գործընթացների, ժողովրդավարության իդեալի մասին հասարակության պատկերացումների փոփոխության, բազմակարծության սկզբունքի ամրապնդման հետ: Ժամանակակից ժողովրդավարության հասկացությամբ «ժողովրդի կամք»-ը ներառում է օրենսդրության մեջ հասարակության ժամանակակից բոլոր խմբերի շահերի հաշվառումը և արտացոլումը:

Հարկ է նշել, որ օրինաստեղծման գործընթացին քաղաքացիների մասնակցության ընդլայնման հետևանքով այդպիսի գործունեությունը չի դադարում ոչ պետական գործունեության տեսակ լինելուց<sup>1</sup>:

Ժողովրդավարությունն այն գլխավոր երաշխիքներից է, որի առկայության դեպքում օրինագծերի (նախագծերի) նախապատրաստումը, քննարկումը և ընդունումը տեղի է ունենում իրավական ընթացակարգով, այսինքն՝ օրենքով սահմանված կարգով, որտեղ կբացառվեն հնարավոր կամայականություններն ու անօրինականությունները օրինաստեղծ մարմնի կողմից<sup>2</sup>:

Օրինաստեղծման ժողովրդավարության սկզբունքի կարևոր դրսևորումներից մեկը խորհրդարանական լուսններն են, որոնք հնարավորություն են տալիս հասարակության ներկայացուցիչներին և համապատասխան մասնագետներին արտահայտել իրենց դիրքորոշումը քննարկվող օրինագծի վերաբերյալ և հանդես գալ առաջարկություններով:

Օրինաստեղծման ժողովրդավարությունն օրգանական կապ է ապահովում մի կողմից օրենսդրի և նրա գործունեության, մյուս կողմից՝ ժողովրդի և նրա շահերի միջև: Այս սկզբունքին հավատարիմ մնալով՝ օրենսդիրն ապահովագրում է իրեն իրականությունից կտրված լինելուց, ինչպես նաև հասարակական կյանքի, ժողովրդի իրական շահերի հետ չկապված օրենսդրական փորձարկումներից: Օրինաստեղծման վրա ազդեցություն ունեցող սուբյեկտների շարքից հասարակության լայն զանգավածների բացառումը հղի է կամայականությամբ, իրական սոցիալական գործընթացներից շեղումով և, որպես կանոն օրինաստեղծման նպատակներին չհասնելով<sup>3</sup>:

**Օրինականության սկզբունքը** Հայաստանի Հանրապետությունում հռչակվել է որպես պետական կարգավորման բոլոր ոլորտները թափանցող կարևորագույն համակարգաստեղծ սկզբունք-մեթոդ: Այն անխզելիորեն կապված է իրավունքի ընկերային-նպատակային նշանակության հետ: Այդ սկզբունքի բովանդակությունն ամրագրված է ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ իրավունքի յուրաքանչյուր ճյուղի նորմերում:

Բնական է, որ իրավասու պետական մարմինների իրավաստեղծ գործունեությունը ևս պետք է իրականացվի գործող օրենսդրությանը խիստ

1 Տե՛ս Иванов К.К. Законотворческая деятельность государства при использовании принципа демократизма.: Հղումը՝ <http://sibac.info/2009-07-01-10-21-16/50-2011-12-21-06-47-18/2011-12-21-06-47-43/2586-2012-05-12-08-40-50>:

2 Տե՛ս Սաֆարյան Գ.Հ., Նշվ.աշխ., էջ 116:

3 Տե՛ս Чухвичев Д.В., Аширов Б.С., Նշվ.աշխ., էջ 56:

համապատասխան: Օրինականությունն ընդհանրապես համակարգաստեղծ սկզբունք է, որն ընկած է հասարակական կյանքի բոլոր ոլորտների, այդ թվում՝ իրավաստեղծման հիմքում:

Նորմատիվ իրավական ակտերի ցանկացած տեսակի ընդունման համար գոյություն ունի համապատասխան իրավական կարգադրագրերում ամրագրված հստակ ընթացակարգ: Օրինաստեղծման գործընթացը պետք է իրականացվի այդ պահանջներին խիստ համապատասխանության պայմաններում: Դրանք մասնավորապես վերաբերում են օրենք ընդունող մարմնի իրավասությանը, օրենքի նախագծի մշակմանը, այն շրջանառության մեջ դնելուն, խորհրդարանի համապատասխան մշտական հանձնաժողովում և լիազումար նիստերում այլ իրավական ակտեր մշակելու իրավասություն ունեցող մարմինների խորհուրդներում, նախարարությունների կողմից հանձնվելու և (կամ) կառավարության նիստերում քննարկվելուն, դրա ընդունման և հրապարակման կանոններին, իրավական նորմերի և ակտերի աստիճանակարգությանը:

Վերը նշված կանոններից շեղումը կարող է հանգեցնել տեխնիկական այնպիսի խախտումների, որոնք ունակ են ի չիք դարձնել օրենքի կարգավորիչ հնարավորությունները նույնիսկ այն դեպքում, եթե այն ուժի մեջ մնա: Բացի այդ, օրինաստեղծման օրենսդրորեն ամրագրված կարգի խախտումը կարող է բացասական անդրադարձ ունենալ օրենսդրության և ընդհանրապես իրավունքի վերաբերյալ մարդկանց վերաբերմունքի վրա:

Մեր կարծիքով օրինականության սկզբունքն իր մեջ ներառում է նաև իրավական պետության սահմանադրական դրույթին սերտորեն «թղթակցող» մեկ այլ սկզբունք ևս: Խոսքը իրավունքին համապատասխանության ենթասկզբունքի մասին է: Այդ ենթասկզբունքի բովանդակությունը, մեր կարծիքով, հետևյալն է. օրինաստեղծումը ոչ թե իրավասու մարմինների և անձնաց կամայական գործունեություն է, այլ այնպիսի գործունեություն, որը ենթարկվում է իրավունքին՝ դրա անսասան, հազարամյակներ շարունակ գործած սկզբունքներով: Օրենսդրի խնդիրն է ապահովել օրենքի համապատասխանությունը իրավունքի սկզբունքներին: Չափազանց կարևոր է, որ օրինաստեղծման գործընթացի բոլոր սուբյեկտները հավատարիմ մնան այս սկզբունքին: Ինչպես իրավագիտորեն նշում է պրոֆեսոր Գ.Հ.Սաֆարյանը, իրավունքի և օրենքի տարբերակման հայեցակարգի էությունը նրանում է, որ նորմատիվ իրավական ակտը, որպես պետական կամքի արտահայտություն, կոչված է ճիշտ և համարժեք ձևակերպելու հասարակական հարաբերություններում օբյեկտիվորեն գոյություն ունեցող «իրավունքը»<sup>1</sup>:

**Հրապարակայնության սկզբունքն** արտահայտվում է նրանում, որ օրենքների և նորմատիվ իրավական այլ ակտերի քննարկմանը մասնակից են դարձվում զանգվածային տեղեկատվության միջոցները, հասարակայնությունն ամբողջությամբ: Միայն իրավաստեղծման գործընթացի վերա-

<sup>1</sup> Տե՛ս Սաֆարյան Գ.Հ., նշվ.աշխ., էջ 110:

բերյալ մշտապես համակարգված և ճշմարիտ տեղեկատվություն ունենալով է, որ բնակչությունը կարող է դրա վրա դրականորեն ազդելու հնարավորություն ստանալ:

Նշված սկզբունքը ենթադրում է մի կողմից օրինագծերի (այլ նախագծերի) քննարկման և ընդունման թափանցիկություն, մյուս կողմից՝ դրանց պարտադիր հրապարակում: Օրենքի նախագծերը զանգվածային լրատվության միջոցներով հրապարակելը կամ այլ կերպ հանրայնացնելը հետապնդում է դրանց քննարկումներին հասարակությանն առավելագույնս ներգրավելու նպատակ: Հրապարակայնության սկզբունքից բխում է նաև, որ քաղաքացիները պետք է իրազեկված լինեն օրինագծերի քննարկման և ընդունման բոլոր մանրամասներին: Ըստ որում, նախագծերն առաջին հերթին պետք է հանրայնացվեն օրենսդիր (ներկայացուցչական) մարմնում (ներսում): Հանրայնացման ենթակա են նաև օրենսդիր և գործադիր մարմինների միջև այդ առնչությամբ առկա հակասությունները: Դրա վառ վկայությունն է ընտանեկան բռնության կանխարգելման և ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին ՀՀ ԱԺ-ում գտնվող օրինագծի կապակցությամբ ծավալված լայն քննարկումները:

Հրապարակայնության պայմաններում օրենքների և այլ իրավական ակտերի մշակումը հնարավորություն է տալիս պարզել, թե որքանով է տվյալ օրինագիծը (նախագիծը) համապատասխանում բնակչության կենսական շահերին և պահանջումներին: Դա էլ իր հերթին բացահայտում է, թե իրավական ինչպիսի վարքագիծ կդրսևորեն քաղաքացիները. կգործեն օրենքին համապատասխան, թե չեն ենթարկվի դրան՝ ընտրելով իրենց նպատակին հասնելու այլ միջոցներ: Շահագրգիռ հասարակայնության հետ հետադարձ կապը թույլ է տալիս իրավաստեղծ մարմնին պարզել՝ արդյոք օրինագծի բոլոր դրույթներն են հասկանալի քաղաքացիներին: Շատ կարևոր է իմանալ մարդկանց արձագանքը օրինագծերի (նախագծերի) վերաբերյալ, անկախ նրանից թե այն դրական, բացասական, թե չեզոք կլինի:

**Գիտական հիմնավորվածության (գիտականության) սկզբունքը** պահանջում է, որ կոնկրետ օրենքի, նորմի կամ այլ իրավական ակտի ընդունման պահին մանրակրկիտ կերպով ստուգվի ընկերային-տնտեսական իրադրությունը, որպեսզի օրենքը (այլ իրավական ակտը, դրույթը) համապատասխանի այդ իրադրությանը, այսինքն՝ գիտական հիմնավորվածությունը նախևառաջ ենթադրում է կենսագործունեության այն ոլորտի տնտեսական, հոգեբանական, ընկերային-քաղաքական և այլ գործոնների զարգացման պատշաճ հաշվառում, որին վերաբերում է կոնկրետ նախագիծը: Դա բացառում է կոնկրետ նախագիծը հակասություններից, ապահովում է դրա նորմերի (դրույթների) իրավաբանական և տրամաբանական փոխկապակցվածությունը, հնարավորություն է ստեղծում, որ այդ նախագիծը «թղթակցի» հարակից իրավական ակտերի նմանատիպ նորմերի (դրույթների) հետ<sup>1</sup>:

1 Տե՛ս Ի.Ա. Кибак Соблюдение принципов в законотворческой деятельности// Вестник Воронежского института МВД России, 2011, N 2, էջ 130:

Գիտականությունը թելադրում է օրինագծերի գիտական մշակման, ինչպես նաև սոցիոլոգիական տվյալների իմացության մասին գիտելիքների առկայության անհրաժեշտությունը:

Օրինաստեղծման գիտական բնույթը կայանում է նրանում, որ այն կոչված է հնարավորինս ամբողջականորեն համապատասխանել հասարակական զարգացման պահանջմունքներին, դրա օբյեկտիվ օրինաչափություններին և հասարակական իրավագիտակցության մակարդակին: Օրինագիծը պետք է հաշվի առնի ու օգտագործի գիտության և տեխնիկայի ձեռքբերումները: Օրինագծերի մշակմանը պետք է ներգրավվեն գիտական հաստատություններ, գիտության համապատասխան ճյուղի առանձին ներկայացուցիչներ, իրավաբան գիտնականներ:

Օրենքի կամ այլ իրավական ակտի նախագծեր մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև տվյալ հարաբերության օրենսդրական կարգավորման միջազգային փորձը և արտասահմանյան գիտնականների ուսումնասիրությունները: Անշուշտ, այլ իրավական համակարգերում օգտագործվող օրինաստեղծման ինստիտուտների, հնարքների և մեթոդների ամբողջական «պատճենահանումն» աննպատակահարմար է, կարող է հանգեցնել բացասական հետևանքների, խոչընդոտել օրինաստեղծման գործընթացի համակարգվածությանը և խճճել այն, դրա արդյունքում առաջացնել օրենսդրական բացեր: Միջազգային փորձի գիտական հետազոտությունը և ձիշտ եզրակացությունների հանգելը ոչ միայն կարող է նպաստել օրենսդրի առջև ծառայած բարդ խնդիրների լուծմանը, այլև թույլ տալ մոտարկել տարբեր պետությունների օրենսդրական կարգավորման համակարգերը, միավորել իրավական կարգավորման նպատակներով առավել նման ինստիտուտները, խթանել միջազգային իրավական ինտեգրումը<sup>1</sup>:

**Ստեղծագործական բնույթ ունենալու սկզբունքը** վերաբերում է իրավաստեղծ գործընթացի մասնակիցների նախաձեռնողականությանն ու ակտիվությանը: Ըստ այս սկզբունքի՝ օրենքի կամ այլ իրավական ակտի քննարկմանը մասնակցող բոլոր անձանց տրվում է իրավական միջոցների այնպիսի համալիր, որը թույլ է տալիս պնդել իրենց այս կամ այն կարծիքը՝ նախագիծը հիմնավորելու կամ ժխտելու համար բերել տարբեր հայեցակետեր, փաստարկներ ու նկատառումներ: Իսկ քննարկումներն ու բանավեճերը թույլ են տալիս վերհանել իրավաստեղծ գործընթացին մասնակցող անձանց կարծիքները՝ նպաստելով տվյալ հարցում բազմակարծության և «օրենսդրական ձճմարտության» հաստատմանը, իրավաստեղծման բնագավառում ստեղծագործ մթնոլորտի արմատավորմանը:

**Իրավաստեղծման սուբյեկտների արհեստավարժության (պրոֆեսիոնալիզմի)** սկզբունքը ենթադրում է իրավաստեղծ գործընթացի բոլոր փուլերում որակավորված և մասնագիտական բարձր կարողություններ ունեցող անձանց պարտադիր մասնակցություն<sup>2</sup>: Իսկ արհեստավարժությունը

1 Տե՛ս Чухвичев Д.В. Аширов Б.С. *Уշվ.աշխ էջ 51-52*:

2 Տե՛ս Теория государства и права. Учебник для вузов. Под.ред. проф. В.М. Карельского и проф. В.Д. Первалова. – 2-е изд., изм. и доп. М.: Издательство НОРМА. 2000, էջ 304:

պահանջում է, որ իրավաստեղծ աշխատանքում ներգրավված բոլոր մասնակիցները տիրապետեն այդ աշխատանքի հնարքներին (իրավաբանական նրբություններին) և դրանք իրագործեն պատշաճ մակարդակով: Նշված սկզբունքի իրագործումը ենթադրում է նաև օրենքի կամ այլ իրավական ակտի նախագծի վերաբերյալ քննարկումներին այնպիսի մասնագետների պարտադիր ներգրավում, ովքեր կարող են մասնագիտորեն որակյալ գնահատական տալ նախագծին և/կամ նպաստել դրա կատարելագործմանը:

Իրավաստեղծ գործունեության մեջ (նախագծի ստեղծումն էլ այդ գործունեության փուլերից մեկն է՝ հեղինակներ) սիրողականությունը (դիլետանտիզմը) նույնքան վտանգավոր է, որքան այլ մասնագիտական բնագավառների աշխատանքներում<sup>1</sup>:

Իրավաստեղծման գործընթացում երբեմն տարաձայնություններ են առաջանում մի կողմից իրավաբանների, տնտեսագետների, քաղաքագետների, մյուս կողմից՝ նրանց և խորհրդարանականների միջև այն հարցում, թե ովքեր պետք է ստեղծեն օրենքներ՝ իրավաբանները, թե քաղաքական գործիչները, տնտեսագետները, թե այլ մասնագետները, խորհրդարանականները, թե իրավաբան գիտնականներն ու համապատասխան նախագծով կարգավորվող հարաբերությունների մասնագետները: Մեր կարծիքով՝ սա անպտուղ վեճ է և կարող է ունենալ մի պատասխան. օրենքները և նորմատիվ այլ ակտերը պետք է ստեղծեն Սահմանադրությամբ նախատեսված օրենսդրական նախաձեռնության սուբյեկտները: Օրինակ՝ ՀՀ կառավարության համապատասխան օղակները՝ ՀՀ արդարդատության նախարարությունը՝ ձյուդային նախարարությունների, ինչպես նաև քաղաքական, տնտեսական և հասարակական կյանքի այլ ոլորտների մասնագետների հետ միասին կամ ԱԺ պատգամավորները և պատգամավորական խմբակցությունները՝ նույն կարգով, բայց իրավաբանների մասնակցությամբ: Այս առումով ՀՀ ԱԺ իրավաստեղծ աշխատանքում խիստ կարևորվում է խորհրդարանի աշխատակազմի իրավաբանական ստորաբաժանման մասնագիտական եզրակացությունները ըստ պատշաճի քննարկելն ու հաշվի առնելն օրենսդրական նախաձեռնությունների հեղինակների կողմից, որը, դժբախտաբար, ՀՀ ԱԺ-ում կիրառվում է հազվագյուտ դեպքերում:

Քննարկվող հարցում վերջերս առաջընթաց մեծ քայլ կատարեց ՀՀ կառավարությունը, որի՝ 2016թ. օգոստոսի 25-ի թիվ 858-Ն որոշմամբ հիմնադրվեց «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամը, որի պետական կառավարման լիազորված մարմինը ՀՀ արդարադատության նախարարությունն է: Այն համապատասխան գիտական ներուժ ունեցող կառույց է, որի խնդիրներն են հիմնել օրենսդրության ստեղծման իրավական մշակույթ, զարգացնել օրենսդրություն մշակելու իրավական մեթոդաբանություն, ձևավորել օրենսդրություն մշակող և վերլուծող փորձառու կադրերի խումբ, ապահովել իրավական նախագծերի և օրենսդրության զարգացման հայեցակարգերի մշակումը, օրենս-

1 Տե՛ս Սաֆարյան Գ.Հ., նշվ. աշխ., էջ 117-118:

դրության ծրագրավորումը, իրավական ակտերի մեթոդական կազմակերպումը և ղեկավարումը, պարզեցնել կարգավորում պարունակող իրավական ակտերն ու թեթևացնել գործարարության և քաղաքացու բեռը՝ կրճատել իրավական ակտերն ու պարզեցնել որոշ իրավական կարգավորումներ և այլն: Սույն հիմնադրամը կարող է լիարժեք ձևով փոխարինել այլ երկրներում (ԱՄՆ, ՌԴ և այլն) գործող խորհրդարաններին կամ նախագահներին (կառավարություններին) կից իրավաբանական ինստիտուտներին:

**Իրավական փորձի օգտագործման սկզբունքը** պահանջում է իրավաստեղծման գործընթացում ստանալ այն պետական մարմինների կարծիքները, որոնք գործնականում պետք է կիրառեն ընդունվելիք իրավական ակտերը: Հենց դրա համար էլ օրենսդիրը պահանջում է, օրինակ, ԱԺ ներկայացվող իրավական ակտերի նախագծերի փաթեթի մեջ ներառել ոչ միայն դրա բուն նախագիծը, այլ նաև իրավական ակտի ընդունման փաստարկում-հիմնավորումը (ՀՀ ԱԺ կանոնակարգ-օրենքի 47-րդ հոդվ.): Իրավական ակտի ընդունման քաղաքական, տնտեսական, ընկերային, մշակութային և այլ հիմնավորումները հնարավորություն են տալիս օրենսդիրին կողմնորոշվելու տվյալ ակտն ընդունելու հարցում:

Իրավական փորձի օգտագործման սկզբունքից բխում է նաև, որ ցանկացած նոր մշակվող նախագիծ պետք է հենվի տվյալ կամ այլ պետության արդեն հայտնի դրական փորձի վրա: Այլ պետության դրական փորձն ընդօրինակելիս, իհարկե, չպետք է մոռանալ այն պետության մեջ առկա ազգային առանձնահատկությունները, որտեղ պետք է գործի օրենքը կամ այլ իրավական ակտը:

**Պրակտիկայի հետ կապի ապահովման սկզբունքն** իրավաստեղծ սուբյեկտների առջև խնդիր է դնում անընդհատ հետևել հասարակական գործընթացներին, կենտրոնանալ արդեն իսկ գործող իրավական ակտերի կիրառման պրակտիկայի վրա և ժամանակին վերացնել օրնսդրական բացերը: Իզուր չէ, որ օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների հիմնադրամի կարևոր գործառնություններ են համարվում նաև օրենսդրության գիտական և պրակտիկ կիրառական վերլուծություններ կատարելն ու դրա հիման վրա նոր իրավական ակտերի մշակումներն ու իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների կատարումը, օրենսդրության մեջ առկա բացերը, հակասությունները կամ այլ թերությունները վերացնելուն ուղղված ակտերի մշակումը, ինչպես նաև իրավական ակտերի նախագծեր պատրաստելու համար վերլուծությունների իրականացումը<sup>1</sup>:

**Իրավական ակտերի նախագծերի նախապատրաստման պատշաճության և մանրակրկիտության սկզբունքի** համաձայն կարևոր է առավելագույնս օգտագործել հայրենական և արտասահմանյան փորձը, սոցիոլոգիական և այլ հետազոտությունների արդյունքները, տարբեր տեղեկանքներ, գեկույցներ և այլ նյութեր: Անհրաժեշտ է խուսափել շտապողականությունից, հապճեպ, չստաժված որոշումներ ընդունելուց:

1 Տե՛ս հիշյալ ակտի ընդունման հիմնավորումների բաժինը:



Համաշխարհային պրակտիկան ակնհայտորեն վկայում է, որ իմաստուն անշտապությունը որակյալ իրավաստեղծ աշխատանքի անփոխարինելի հատկություն է: Յուրաքանչյուր իրավաստեղծ որոշման ուշադիր և մանրակրկիտ նախապատրաստումը պահանջում է անհրաժեշտ նախապատրաստական նյութերի ընտրություն, հետազոտությունների անցկացում, առաջարկվող իրավակարգավորման արդյունավետության վերլուծություն:

**Իրավունքի համակարգվածության սկզբունքը**, անշուշտ, կապված է իրավունքի ծրագրավորման և կանխատեսման սկզբունքի հետ, որովհետև ծրագրավորման օբյեկտների ցանկի մեջ բնականաբար առաջին հերթին մտցվում են այսպես կոչված կենտրոնական կամ համակարգաստեղծ, իսկ այսպես՝ այլ իրավական ակտերը, որոնք մանրամասնում են դրանք կամ սահմանում են դրանց ուժի մեջ մտնելու, դրանց հիման վրա ընդունվելիք ակտերի ցանկը, դրանց կատարման կարգը և այլն:

Օրենսդրական ծրագրավորումը և կանխատեսումն իրենցում պարունակում են որոշակի հերթականություն, բայց իրավաստեղծման գործընթացները և գործողությունները, որ հաջորդում են դրանց, բարդ համակցություն են: Գործընթացների և գործողությունների փոխկապակցվածությունը և ճիշտ հերթականության սահմանումը նպաստում են իրավաստեղծման աշխատանքների բարձր որակին, հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման միասնականությանը, աստիճանակարգային բնույթին, իրավական ակտերի փոխկապակցվածությանը, ինչպես նաև օրենսդրության պահանջների և կարգադրագրերի իրական և իրագործելի լինելուն:

Իրավաստեղծման համակարգվածությունը ենթադրում է առանձին նորմատիվ իրավական ակտերի՝ որպես միասնական օրենսդրության մասի, խստորեն որոշված գործառնությանի նշանակությամբ մշակումների կատարում: Համակարգվածության սկզբունքից բխում է քննարկվող իրավական նոր ակտում առաջարկվող փոփոխությունների և (կամ) լրացումների, կամ նոր իրավական ակտերի ընդունման հետ միասին անհրաժեշտության դեպքում այլ իրավական ակտերում լրացումներ նախատեսող անհրաժեշտ այլ ակտերի ընդունում: Ըստ որում, ընդունված իրավական ակտն անպայմանորեն պետք է ներգրավվի ամբողջ իրավական համակարգի իմաստային և իրավաբանական աստիճանակարգության մեջ: Հակառակ դեպքում ընդունված իրավական ակտերը կկրեն սոսկ հռչակագրային բնույթ և չեն ունենա որևէ իրավական նշանակություն իրական կյանքում:

**Իրավական ակտերի տեխնիկական կատարելության սկզբունքը** պահանջում է, որ այդ ակտերը նախապատրաստվեն և ընդունվեն իրավագիտության մեջ մշակված և իրավակիրառ պրակտիկայում փորձարկված միջոցների և հնարքների օրենսդրական տեխնիկայի կանոնների պահպանմամբ: Այդ կանոններն ամրագրված են օրենքներում, այլ իրավական ակտերում և պարտադիր են իրավաստեղծ սուբյեկտների համար:

Օրենքների և այլ իրավական ակտերի որակի արդյունավետության բարձ-

րացման համար օրենսդրական տեխնիկան երբեմն ոչ պակաս կարևոր նշանակություն ունի, քան բովանդակությունը: Ի վերջո, օրենքի հստակ և տրամաբանական շարադրանքից, դրանում ակնհայտ և թաքնված հակասությունների բացակայությունից, դրանում միասնական իրավաբանական եզրաբանության ամկայությունից են կախված ոչ միայն ընդունված օրենքի տեքստի և բովանդակության մակարդակը, այլև դրա կիրառման արդյունավետությունը:

Առանձնահատուկ նշանակություն ունի իրավաբանական նորմերի շարադրման լեզուն: Տարբեր պետությունների օրինաստեղծ գործունեության մեջ առկա են իրավական ակտերի լեզվի պարզության, հստակության և մատչելիության պահանջներ: Օրենքի (այլ իրավական ակտի) ոճը պետք է իմպերատիվ-հրամայական ու պաշտոնական լինի: Այն էապես պետք է տարբերվի ինչպես գեղարվեստական գրականության ստեղծագործությունների, այնպես էլ առօրյա խոսակցական ոճից: Օրենքների և այլ իրավական ակտերի տեքստերում չի թույլատրվում կատարել ընդհանուր դատողություններ և ներկայացնել գիտական դրույթներ, կատարել գեղարվեստական համեմատություններ: Անհրաժեշտ է խուսափել հոչակագրային դրույթներից, կոչերից, տեքստային երկարաբանություններից և անհարկի կրճատումներից:

Մշտապես անհրաժեշտ է հիշել, որ նորմատիվ իրավական ակտը գրվում է գործնականում անսահմանափակ թվաքանակի հասցեատերերի համար, ուստի անթույլատրելի են դրա՝ լեզվի չափից ավելի բարդությունը և արհեստական մեծածավալությունը<sup>1</sup>:

**Արդյունավետության (ողջամտության, նպատակահարմարության, ժամանակին ընդունված լինելու և իրագործելիության) սկզբունքը** նշանակում է, որ օրենքի կամ այլ իրավական ակտի նախաբանում կամ հենց դրանց բուն տեքստում պետք է ամրագրել որոշակի նպատակ և նվազագույն ծախսումներով դրան հասնելու միջոցները: Իրավաստեղծման արդյունավետությունն էլ կայանում է հենց այդ նպատակին հասնելու մեջ, որի համար ստեղծվել է իրավական ակտը:

Իրավաստեղծման արդյունավետության սկզբունքի իրացմանը նպաստում է իրավական նորմերի ընդունման ողջամտության (անհրաժեշտության), նպատակահարմարության, ինչպես նաև դրանց ժամանակին ընդունելու հիմնավորումները: Այս սկզբունքը պահանջում է նաև տվյալ նախագծի մշակման ժամանակ հաշվի առնել ֆինանսական, կազմակերպական, կադրային և իրավական բնույթի այն պայմանները, որոնց ամկայությամբ միայն հնարավոր կդառնա ընդունված իրավական ակտի գործողությունը:

**Օրենքի և այլ իրավական ակտերի ձևի և բովանդակության համապատասխանության սկզբունքը** նշանակում է, որ իրավաստեղծման այս կամ այն ձևն ընտրելիս իրավաստեղծման սուբյեկտը պետք է հաշվի առնի օրենքի տեսակը, այսինքն այն, թե դա սահմանադրությու՞ն է, օրենսգրք, սահմանադրական (օրգանական) օրենք, թե նշվածներից ցածր իրավաբանական ուժ ունեցող օրենք, կամ իրավական այս կամ այն ակտը ինչ տեսակի օրենքի լրացմանը

1 Տե՛ս Книпер Р., Назарян В. Очерки к проблеме законодательной техники. Эшборн, 1999: Հղումը՝ <http://www.ex-jure.ru/law/news.php?=-1129>:

կամ փոփոխմանն է նվիրված: Այլ կերպ ասած՝ իրավական ակտերի տեսակների միջև ընտրությունն իրականացվում է իրավաստեղծ կարգավորման առարկայի վերլուծության հիման վրա: Իրավաստեղծման տեխնիկան պարունակում է այնպիսի կանոններ, որոնցով իրավաստեղծ սուբյեկտը ղեկավարվում է օրենքի վերը նշված տեսակների միջև ընտրություն կատարելիս:

Իրավաստեղծման ձևի և բովանդակության անհամապատասխանությունը կարող է լուրջ խոչընդոտ հանդիսանալ գործունեության այդ տեսակի արդյունավետության բարձրացման ճանապարհին: Մեր Հանրապետության իրավական պրակտիկայում քիչ չեն իրավական կարգավորման ոչ ենթակա հարաբերություններն օրենքով կարգավորելու կամ, ընդհակառակը, օրենքով կարգավորման ենթակա հարաբերությունները իրավական այլ ակտերով կարգավորելու դեպքերը: Երբեմն մոռացության է տրվում, որ օրենքներով պետք է կարգավորվեն առավել կարևոր և կայուն հասարակական հարաբերությունները: Մեր համոզմամբ նման մոտեցումը հնարավոր կլինի կանխարգելել Իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի դրույթները և կարգավորման ենթակա հասարակական հասարակությունների բնույթը խորապես ուսումնասիրելու միջոցով:

**Առաջնայնության սկզբունքը** նշանակում է, որ ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ կառավարությունը, պատգամավորական խմբակցությունները և պատգամավորները պետք է, որպես կանոն, օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու որոշակի հերթականություն սահմանեն և առաջին հերթին նախապատրաստեն ու քննարկման ներկայացնեն սահմանադրական (օրգանական) օրենքները, իսկ ապա՝ հիմնային օրենսգրքերը, որոնք բացահայտում են օրենսդրության տվյալ ճյուղի կողմից կարգավորվող հասարակական հարաբերությունների ցանկը, իմաստն ու բովանդակությունը: Այս տեսակի օրենքների ընդունմանը պետք է հաջորդեն օրենսդրության յուրաքանչյուր ենթաճյուղին վերաբերող հատուկ օրենքները, իսկ ապա՝ օրենսդրության տվյալ ճյուղի կամ ենթաճյուղի բացերը լրացնելու վերաբերյալ օրենքները: Ենթաօրենսդրական իրավական ակտերի մշակումը և ընդունումը կարող է միայն հաջորդել նշված գործունեության հերթականության մեջ:

Այսպիսով, իրավաստեղծ գործունեության մեջ առաջնայնությունը, այսինքն՝ տնտեսական և քաղաքական համակարգերի հիմունքները կարգավորող օրինագծերի առաջնահերթ քննարկումը, ընդհանուր բնույթի օրենքների ընդունումը իրավաստեղծ գործունեության կարևորագույն սկզբունքներից է: Այս սկզբունքը ենթադրում է մոտակա և ավելի հեռավոր ժամանակահատվածի համար առաջնահերթ օրենքների և այլ իրավական ակտերի, ինչպես նաև դրանց ընդունման հերթականության որոշում: Մեր կարծիքով՝ առաջնային են այն օրենքները, որոնց ընդունումը բխում է Սահմանադրությունից: Հենց այդ օրենքներն են կոչված ստեղծելու այն իրավական հիմքը, որի վրա պետք է կառուցվի հետագա օրենսդրությունը: Օրինակարգված (կողմֆիկացված) օրենքների հիման վրա արդեն ընդունվում են օրենսդրության յուրաքանչյուր ենթաճյուղին վերաբերող հատուկ օրենքներ: Այլ օրենքների կամ այլ իրավական

ակտերի ընդունման հերթականությունը պայմանավորված է օրենսդրության տվյալ ձյուղի կամ ենթաձյուղի բացերը լրացնելու անհրաժեշտությամբ:

**Խնայողության սկզբունքը** նախևառաջ պահանջում է ձեռնպահ մնալ նորմատիվ իրավական ակտերի քանակի անհարկի ավելացումից, նախատեսում է օրինագծի նախապատրաստման փուլում իրավունքի տարբեր սուբյեկտների կողմից միմյանց փոխադարձ տեղեկությունների հաղորդում: Խնայողության սկզբունքի պահանջը միևնույն հարցի վերաբերյալ իրավական ակտերի քանակը նվազագույնի հասցնելն է՝ նորմատիվ նյութի հնարավորինս տեսանելիության ապահովման, դրանից օգտվելու, դրա հաշվառման և համակարգման գործընթացների դյուրինացման նպատակներով: Պատահական չէ, որ խնայողության սկզբունքի դերն իրավաստեղծ գործունեության մեջ ՀՀ կառավարության կողմից ընդգծվում է հատկապես՝ նկատի ունենալով մեր օրենսդրական պրակտիկայում գոյություն ունեցող ավելորդությունները: Այսպես՝ «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն հիմնադրամ ստեղծելու և կանոնադրությունը հաստատելու մասին» որոշման հիմնավորման մեջ ուղղակիորեն նշվում է, որ. «Ճյուղային նախարարությունները հաճախ առանց խորը վերլուծության մշակում են այնպիսի իրավական ակտեր, որոնք անհիմն ծավալուն են, գրված չեն միատեսակ ձևով և ոճով, հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին», իսկ հետո «դրա նկատմամբ որևէ մշտադիտարկում չի անցկացվում»: Սրանից ելնելով էլ հեղինակներն առաջարկում են ստեղծվող հիմնադրամի կանոնադրության մեջ նորմ սահմանել. յուրաքանչյուր նոր ընդունվող օրենքի կամ այլ իրավական ակտի կիրառման մեկ տարին լրանալուց հետո վերլուծել դրա արդյունքները, առավելությունները, իրավական ակտերի սովորոտ կողմերը և օրենսդրին, նրան իրավաստեղծման հարցում օժանդակող մարմիններին և պաշտոնատար անձանց ներկայացնել համապատասխան ակտը լրացնելու կամ փոփոխելու առաջարկներ:

**Իրավաբանական եզրութաբանության միասնականության սկզբունքի** կարևորությունը գնալով մեծանում է ժամանակակից պայմաններում, երբ կյանքի տարբեր ոլորտներում աճում է գիտական և տեխնիկական եզրայթների, հատուկ արտահայտությունների թիվը: Եթե հաշվի առնենք նաև օրենքների և այլ իրավական ակտերի ընդհանուր քանակի մշտական աճը, ապա կարող ենք պատկերացնել, թե որքան է ընդլայնվում եզրայթների ոչ միանշանակ գործածման ծավալը: Իրավաբանական եզրութաբանության միասնականությունն անհրաժեշտ է օրենքների ճիշտ և միատեսակ կիրառության համար:

Իրավաբանական եզրութաբանության միասնականությունն անհրաժեշտ է այնտեղ, որտեղ միևնույն հասկացության տարբեր տեսակներն ունեն ձևական իրավաբանական նշանակություն, այսինքն այն ժամանակ, երբ այլ եզրայթի կամ արտահայտության գործածումը կարող է այլ իրավական հետևանքների առաջացման պատճառ դառնալ: Քննարկվող սկզբունքն առավել հետևողականորեն պետք է կյանքի կոչվի միևնույն իրավական ակտի շրջանակներում: Այստեղ եզրաբանական չհամակարգվածությունը

վերածվում է օրենսդրական տեխնիկայի և կանոնների էական խախտման:

**Իրավական որոշակիության սկզբունքի իմաստը** կայանում է նրանում, որ օրենքների և այլ իրավական ակտերի լեզուն, որն օրենսդրի մտքերի արտահայտման միակ միջոցն է, պետք է լինի հասկանալի և ընդհանուր գործածական, նաև՝ տրամաբանական, արտացոլի առողջ դատողությունն այս կամ այն հարցի վերաբերյալ: Միառժամանակ այն պետք է լինի պարզ և հակիրճ, բայց այնպես, որ յուրաքանչյուր անձ կարողանա ճշգրիտ կերպով հասկանալ իր այն իրավունքներն ու պարտականությունները, որոնք առաջանում են իրավունքի տվյալ նորմի ուժով, ըմբռնել իրավական կարգադրագրի ընդհանուր իմաստը և ունենալ դրա իրականացման հստակ կողմնորոշում: Բ.Սպասովն իրավացիորեն նշում է, որ լեզվի մատչելիությունն արտահայտվում է երկու հիմնական չափանիշների միջոցով՝ 1)յուրաքանչյուրը պետք է հստակ և ճշգրիտ կերպով հասկանա իրավունքներն ու պարտականությունները, որոնք «ծնունդ» է օրենքը, 2) յուրաքանչյուրը պետք է կարողանա հասկանալ իրավական կարգադրագրի ընդհանուր իմաստը՝ սոցիալական նորմերի համակարգում դրա դերի հետ կապի մեջ:

ՀՀ օրենսդրության մեջ իրավական որոշակիության սկզբունքի ներմուծումն առաջին անգամ կատարվեց 2011թ. հոկտեմբերի 26-ի ՀՕ-268-Ն օրենքով, ըստ որի Սահմանադրական դատարանի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 61-րդ հոդվածի լրացումը՝ «Սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները պետք է համապատասխանեն իրավական որոշակիության պահանջներին» 2.1 կետով (տես ՀՀՊՏ, 11 նոյեմբերի 2011, N 61): Այս լրացման մեջ իրենց լուրման են ներդրել նաև հեղինակները՝ որպես նման նախաձեռնություն ցուցաբերած պատգամավորի և պատգամավորի օգնականի: Հետագայում այդ կարևորագույն սկզբունքը ձևակերպվեց նաև ՀՀ Սահմանադրության 2015թ. դեկտեմբերի 21-ի փոփոխությունների 6 և 79-րդ հոդվածներում՝ որպես լիազորող նորմերի և հիմնական իրավունքների իրավունքների ու ազատությունների սահմանափակման օրենքներին ներկայացվող պահանջներ:

Իրավաբանական բնորոշումները պետք է հիմնվեն որոշակի փոխհամաձայնության վրա: Իրավաբանական նշանակություն ունեցող բառերը և արտահայտությունները բոլոր իրավական ակտերում պետք է օգտագործվեն միևնույն իմաստով: Այդ կապակցությամբ Ե.Լուկյանովան իրավացիորեն առաջարկում է ամրագրել հետևյալ կանոնը. յուրաքանչյուր նոր եզրույթ պետք է հստակորեն բացահայտվի այն նորմատիվ իրավական ակտում, որտեղ առաջին անգամ հայտնվում է, և ընդգրկվի համապատասխան ցանկում<sup>2</sup>:

**Իրավաստեղծման գործընթացի իրավական բնույթ ունենալու սկզբունք-պահանջը** նշանակում է, որ անթույլատրելի է ոչ իրավական գործոնների ազդեցությունն իրավաստեղծման գործընթացի վրա: Քանի որ իրավաստեղծ գործունեության նպատակը նորմատիվ իրավական ակտերի հոդվածներում իրա-

1 Տե՛ս Спасов Б.П., Закон и его толкование .-М.,: Юрид. Лит., 1986, էջ 70-91:

2 Տե՛ս Лукьянова Э.А. Как готовить закон// Народный депутат, 1990, N 12, էջ 86:

վունքի նորմերի ամրագրումն է, ուստի միայն իրավունքի նորմերը պետք է արտացոլվեն օրենսդրության մեջ, միայն հասարակական կյանքի և դրա զարգացման օբյեկտիվ շահերը պետք է կանխորոշեն դրա բովանդակությունը: Իրավաստեղծման գործընթացի արդյունքների վրա ծայրաստիճան բացասական ազդեցություն կարող են ունենալ դրա մասնակիցների անձնական պատվախնդրությունը (ամբիցիան), շահերը, էմոցիաները և այլն: Արդյունքում կարող է պակասել օրենքների արդյունավետությունը. դրանք կարող են ընդհանրապես կորցնել իրենց կարգավորիչ նշանակությունը: Այդ պատճառով օրինաստեղծման գործընթացը պետք է հիմնվի բացառապես իրավական բնույթի գործոնների վրա, որոնք արտացոլում են հասարակական կամքը և բխում հասարակության շահերից:

**Հատուցման (ռետրիբուտիվ ապահովվածության) սկզբունքը** («ռետրիբուցիա» բառը լատիներենից թարգմանաբար նշանակում է վարձ, փոխհատուցում, հատուցում, վճարում) իրավունքի գործառնության կարևոր առանձնահատկություն է, դրա արդյունավետ գործառնման պայման:

Օրենքն առանց սանկցիայի կորցնում է գործնական նշանակությունը: Իրավախախտման դեպքում իրավական պաշտպանության կառուցակարգ ձևավորելով՝ սանկցիաները որոշում են իրավական ռետրիբուցիայի անխուսափելիության սկզբունքի բովանդակությունը և իրական գործառնության ուժը:

Այսպիսով, իրավաստեղծումը յուրաքանչյուր պետության գործունեության կարևորագույն ուղղություններից մեկն է: Այն բավականին ինքնատիպ աշխատանք է, որը պահանջում է հատուկ գիտելիքներ և ունակություններ իրավունքի տարբեր ճյուղերում, երբեմն նաև այլ ոլորտներում և գործունեության տեսակներում:

Առանց իրավաստեղծման չէին լինի հստակ որոշումներ տարբեր իրավական հարցերի վերաբերյալ, ինչը, կարծում ենք, կառաջացներ մեծ շփոթություն մարդկային խնդիրների լուծման հարցում, օրենքները կմշակվեին ում կողմից պատահեր, որևէ կերպ չէին կարգավորվի քաղաքացիների և կազմակերպությունների վարքագծի կանոնները և պետության մեջ ընդհանուր առմամբ կտիրեր բացարձակ քառս:

Բայց իրավաստեղծումը գոյություն ունի, և օրենսդիրը պարտավոր է իր ուժերն ուղղել իրավական որոշումների որակի բարձրացմանը, անարդյունավետ օրենքների և այլ իրավական ակտերի քանակը նվազագույնի հասցնելուն. դա է նրա կարևորագույն գործառնությունը:

Մենք բոլորս օրենքների և այլ իրավական ակտերի «սպառողներն» ենք, հետևաբար օրենսդիրը պետք է ձեռնպահ մնա հապճեպ, չմտածված իրավական որոշումներից, քանի որ նրա ցանկացած սխալ կարող է հանգեցնել մարդու իրավունքների և օրինական շահերի խախտման, չարդարացված նյութական ծախսերի, ինչպիսին կարող է լինել, օրինակ, աջակողմյան երթևեկության ավտոմեքենաների ղեկը աջից ձախ տեղափոխելիս, որը պահանջում է զգալի ծախսեր:

Իրավաստեղծման գործընթացը ոչ միայն իրավական նորմերի մշակմանն ու հաստատմանն ուղղված պետական գործունեության ձև է, այլև՝ ստեղծագործական գործընթաց, որը հենվում է այդ գործընթացի տրամաբանական հիմունքները ձևավորող հիմնարար սկզբունքների վրա:

Հարկ է նշել, որ իրաստեղծումը հատուկ ստեղծագործական գործընթաց է, որը ներառում է ինչպես ընթացակարգային և տեխնիկական-իրավական, այնպես էլ ճանաչողական և բովանդակային տեսանկյուններ<sup>1</sup>: Իրավաստեղծումը որպես պետական նշանակալի ուղղություն, պետք է հիմնվի ողջամիտ և արդյունավետ սկզբունքների վրա:

Իրավաստեղծման սկզբունքների պահպանումը երաշխիք է օրենսդրության արդյունավետության, օրինաստեղծման արդյունքների նպատակին համապատասխանության, հրապարակվող նորմատիվ իրավական ակտերի ամբողջականության, պարզության, հստակության և կատարողականության<sup>2</sup>, մենք կավելացնեինք՝ նաև իրավական կարգավորման բազմակողմանիության և իրավունքի բացերի նվազեցման:

Չնայած իրավական կարգավորման մեջ իրավաստեղծման նշված սկզբունքների խաղացած էական դերին՝ իրավաբանական գրականության մեջ դրանց ընդհանուր հասկացություն տրված չէ: **Հեղինակներն առաջարկում են դրանց հետևյալ հասկացությունը. «Իրավաստեղծման գործընթացի սկզբունքներն այդ գործընթացի տրամաբանական հիմունքները ձևավորող տեսական և նորմատիվ համաիրավական իրավադրույթներ են, որոնք ապահովում են իրավական կարգավորման բնորոշ գծերի իրացումը, իրավաստեղծագործության գիտական ճիշտ կազմակերպումը, իրավունքի աղբյուրների պատշաճ նախապատրաստումը, քննարկումն ու ընդունումը, ինչպես նաև իրավունքի բացերի վերացումը»:**

Կարծում ենք, որ նման հասկացության գոյությունը կարող է իրավաբան գիտնականների և պրակտիկ իրավաբանների ուշադրությունը բևեռել իրավաստեղծման գործընթացի իրականացման ձևի և բովանդակության վրա:

1 Стен Краснов Ю.К. Законодательный процесс в Государственном Думе: пути совершенствования. М., Издание Государственной Думы, 2004, էջ 32:

2 Стен Чухвичев Д.В., Аширов Б.С., նշվ. աշխ. էջ 50:

**Рафик Петросян**

*Заведующий юридической кафедрой Международного университета Евразия,  
Доктор юридических наук, профессор, заслуженный юрист РА*

**Гарегин Петросян**

*Начальник юридического отдела Аппарата Национального Собрания РА,  
Советник 1-го класса Государственной службы,  
кандидат юридических наук*

## **ПРАВотВОРЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ КАК СПОСОБ УСТРАНЕНИЯ ПРОБЕЛОВ В ПРАВЕ**

Работа относится к устранению и (или) преодолению пробелов в праве. Подчеркивается, что окончательное устранение пробелов совершает только правоустанавливающий (законодательный) орган путем принятия нового закона или дополнения и изменения законов, а преодоление исполняет суд путем применения аналогии закона или аналогии права. Показано, что в преодолении пробелов участвуют также исполнительные и ведомственные органы в пределах своих полномочий.

Скруплезно изложены также системообразующие и «родовые» принципы, регулирующие процесс правосоздания.

**Ключевые слова:** пробелы в праве, устранение пробелов, преодоление пробелов, правотворческий, аналогия, законы, иные правовые акты, принципы, публичность, терминология.

**Rafik Petrosyan**

*Head of the Department of Law at Eurasia International University,  
Doctor of Law, Full Professor, Honored lawyer of the RA*

**Garegin Petrosyan**

*Head of the Legal Department of the RA National Assembly Staff,  
First Class Advisor of the RA State Service,  
Ph.D. in Law*

## **LEGISLATIVE ACTIVITY AS A METHOD OF REMOVING THE GAPS IN THE LAW**

The work refers to the elimination and/or overcoming the gaps in the law. It is emphasized that the final elimination of the gaps can only make the law-making body by adopting a new law or by supplementing and amending the laws. The gaps overcoming are firstly realized by the court through the legal analogy or analogy of law. It has been shown that executive and departmental bodies are also involved in the overcoming of gaps within the framework of their jurisdiction. The article also scrupulously sets out the system-forming and “generic” principles that regulate the legislative activity.

**Key words:** gaps of law, elimination of gaps, overcoming the gaps, law-making, analogy, laws, other legal acts, principles, publicity, terminology.